ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 3

Հայտերի գնահատման նիստի

Սպանդարյան և Ծամբ ՀԷԿ-երի համար գծային անջատիչների մատակարարման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման համար ստացված հայտերի վերջնական գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 14/25**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. սեպտեմբեր 11-ին, Ժամը՝ 11:20-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Մելքումյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գավրուշա Աթայան Արտաշես Գրիգորյան Սևակ Սուրենյան Արսեն Դաջունց Անուշ Հարությունյան Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Արման Պետրոսյանը տեղեկացրեց գնահատող հանձնաժողովի անդամներին, որ MATELEC SAL և Global Energy Group կազմակերպությունները ս.թ. նոյեմբերի 18-ին ժամը 15:00 Coupa համակարգում հրավիրվել էին աճուրդի: Աճուրդի ընթացքում MATELEC SAL-ի գնային առաջարկը մնաց անփոփոխ իսկ Global Energy Group կիրառեց զեղչ 2,300 ԱՄՆ դոլար և աճուրդից հետո գինը կազմեց 424,700 ԱՄՆ դոլար:
2. Ստորև ներկայացված է աճուրդի արդյունքները:

N	Մասնակից	Աճուրդի արդյունքներ	ՀՀ դրամ համարժեք
1	Global Energy Group LLC	424,700 ԱՄՆ դոլար	169,880,000.00
2	MATELEC SAL	787,752 Եվրո	356,891,043.60

3.

4. Հաշվի առնելով աճուրդի արդյունքները առաջարկվեց երկու կազմակերպություններին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների: 2025թ. նոյեմբերի 20-ին ժամը 14:30 կայացած բանակցությունների ընթացքում, քննարկվեցին ծախսերի նվազեցմանը նպաստող առաջարկություններ. մասնավորապես, տեղական մասնագետների ներգրավման, մատակարարման ժամանակացույցի օպտիմալացման, սարքավորումների զեղչային տարբերակները: Global Energy Group կազմակերպության ներկայացուցիչը տեղեկացրեց, որ հաշվի առնելով սարքավորման որակական պահանջները և միջազգային մասնագետների ներգրավվածությունը սարքավորման տեղադրման աշխատանքներին լրացուցիչ զեղչ հնարավոր չե առաջարկել: Իսկ MATELEC SAL կազմակերպության ներկայացուցիչը կիրառեց 204,098 Եվրո զեղչ և վերջնական առաջարկի գինը կազմեց՝ 583,654 Եվրո, կամ համարժեք 264,395,262 ՀՀ դրամ:
5. Գնահատող հանձնաժողովը առաջարկեց կրկին իրականացնել Global Energy Group կազմակերպության հետ գնի նվազեցման շուրջ բանակցություններ, քանի որ առաջարկվող գինը գերազանցում է նախահաշվային գինը 10,880,000 ՀՀ դրամով (նախահաշվային գինը՝ 159,000,000 ՀՀ դրամ, իսկ Global Energy Group-ի վերջնական գինը կազմում է 424,700 ԱՄՆ դոլար, համարժեք՝ 169,880,000 ՀՀ դրամ): Սակայն Global Energy Group կազմակերպության ներկայացուցիչը հրաժարվեց կիրառել որևէ լրացուցիչ զեղչ՝ պատճառաբանելով, որ տվյալ սարքավորումների արտադրողի կողմից վերջին շրջանում տեղի է ունեցել գների աճ, ինչի հետևանքով կազմակերպությունը սարքավորումները ձեռք է բերում ավելի բարձր գնով, և ներկայացված առաջարկը հանդիսանում է իրենց կողմից հնարավոր նվազագույն և վերջնական գինը:

6. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ բանակցությունների արդյունքում հնարավոր չեղավ ապահովել գնի հետագա նվազեցում, և որ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական հատկացումները բավարար չեն առաջարկված գնի շրջանակներում գնումն իրականացնելու համար, գնահատող հանձնաժողովը առաջարկեց չեղյալ հայտարարել մրցույթի արդյունքները և վերահայտարարել մրցույթը մինչև 2026թ. վերջը: Միաժամանակ առաջարկվեց լրամշակել տեխնիկական բնութագիրը՝ ներառելով շուկայի ուսումնասիրության ընթացքում բացահայտված տեխնոլոգիական լուծումներ, ինչը կարող է նպաստել մրցակցության ընդլայնմանը և ավելի տնտեսապես շահավետ առաջարկների ներգրավմանը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան	
	Գավրուշա Աթայան	
	Արտաշես Գրիգորյան	
	Արսեն Դաջունց	
	Սևակ Սուրենյան	
	Անուշ Հարությունյան	
	Արմինե Մանուկյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	